

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 8-ԻՆ՝ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

## ԳԻՈՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻ. «ՉՄԱՍՆԱԿՅԵԼՈՎ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ՝ ՊԱՏՄՈՒՄ ԵՔ ԶԵՉ ԵՎ ՈՂՋ ԵՐԿՐԻՆ»



Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին համարային դասախոսությանը ելույթ ունեցավ Ախալցխայի Սամցխե-Ջավախեթի պետական համալսարանում: Իր խոսքում, Վրաստանի նախագահն առանձնակի կարեւորեց ընտրողների ակտիվությունը եւ քաղաքացիական պարտավորությունների կատարումը երկրի զարգացման գործընթացում: Նրա խոսքով, չմասնակցելով ընտրություններին, բնակիչները, առաջին հերթին, պատժում են իրենց եւ ողջ երկրին: Նա կոչ արեց ակտիվ մասնակցություն ցուցաբերել ընտրություններին եւ կատարել իրենց քաղաքացիական պարտքը՝ նշելով, որ ընտրությունները գործընթաց է, որը երկրին զարգացման հնարավորություն է ընձեռում, եւ դրան մասնակցելը Վրաստանի քաղաքացիների անմիջական պարտավորությունն է:

- Ես կոչ չեմ անում քվեարկել կոնկրետ որեւէ քաղաքացիական ուժի կամ կուսակցության օգտին: Այդ գործընթացին նշանակալից է ձեր մասնակցությունը, ինչը մեր հայրենիքին թույլ կտա նպատակամղված առաջ ընթանալ: Ձեր ընտրությունը պետք է լինի անկախ, մենք պետք է գնահատենք ազատ ընտրության ձեր իրավունքը,- հայտարարեց նախագահը:

## ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ՁԵՐ ՈՐՈՇՈՒՄԻՉ Է ԿԱՍԿԱԾ, ԹԵ ԻՆՉ ՈՐՂՈՒԹՅԱՄԲ ԿԶԱՐԳԱՆԱ ՎՐԱՍՏԱՆԸ»



Հոկտեմբերի 8-ին անցկացվելիք խորհրդարանական ընտրությունների կապակցությամբ, Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին հատուկ ուղերձով դիմեց երկրի բնակչությանը: Վարչապետի ուղերձում ընդգծված է առաջիկա ընտրությունների կարեւորությունը: «Մեզանից յուրաքանչյուրը պետք է հանգի որոշման, եւ այդ որոշումների միասնությունից կախված կլինի այն, թե առաջիկա չորս տարում ինչ ուղղությամբ կընթանա Վրաստանի զարգացումը: Հենց այդ պատճառով էլ նշանակալից է, որ հոկտեմբերի 8-ին բոլորս մասնակցենք ընտրություններին, քվեարկենք երկրի ազատության եւ բարօրության համար, բոլորս միասին ստանձնենք պարտավորություն ապագայի առջեւ:

Համատեղ ջանքերով շատ հարցեր լուծեցինք անցած չորս տարիների ընթացքում: Անցած չորս տարիները երկրի նորագույն պատմության մեջ ամենադինամիկ զարգացման ժամանակահատվածն էր: Համոզված եմ, որ մենք համատեղ կհասնենք հաղթանակի»,- ասված է վարչապետի հայտարարության մեջ:

ՀԱՅԱՍՏԱՆ

## ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՆՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՆՊԱՍՆԵՐԻ ՀԵՏ

Հոկտեմբերի 6-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանն այցելեց կառավարություն եւ, նոր ձեւավորված կառավարության առաջին նիստից առաջ, հանդիպում ունեցավ վարչապետի եւ նորանշանակ նախարարների հետ:



Հայաստանի նախագահը նախ շնորհավորեց նրանց պետական բարձր պաշտոններում նշանակվելու առիթով, մաղթեց արգասաբեր աշխատանք, ապա

անդրադարձավ այն խնդիրներին, որոնք դրված են նոր կառավարության առջեւ:

(Շարունակությունը՝ 7-րդ էջում)

ԱՅՑ

## ՀՈՒՄԻ ՊԱՊԸ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

Ինչպես արդեն հաղորդել ենք, սեպտեմբերի 30-ին, եռօրյա պաշտոնական այցով, Վրաստանում էր գտնվում Հռոմի կաթոլիկ եկեղեցու առաջնորդ Ֆրանցիսկոս Առաջինը: Այցի շրջանակներում, Հռոմի Պապը հանդիպում ունեցավ Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու, Համայն Վրաստանի Կաթոլիկ-Պատրիարք Իլիա Երկրորդի հետ, Թբիլիսիի Սիխելի Մեսիտու անվան մարզադաշտում մատուցեց հանդիսավոր պատարագ:

Այցի ավարտին Ֆրանցիսկոս Առաջինը, Համայն Վրաստանի Կաթոլիկոս-Պատրիարքի հետ այցելեց Վրաստանի հիմնավորը մայրաքաղաք Սցխեթա, եղավ Սվետիցխովելիի Մայր տաճարում:



Վրաստանի նախագահի հետ հանդիպմանը կողմերը քննարկեցին Վրաստանի եւ Վատիկանի միջեւ երկկողմ հարաբերությունների խորացման հեռանկարները: Հանդիպման ավարտին Վրաստանի նախագահն ու Հռոմի Պապը հանդիպում ունեցան Վրաստանի գործադիր եւ օրենսդիր մարմինների, քաղաքացիական հասարակության եւ դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչների հետ:

Վրաստանի նախագահի հետ հանդիպմանը կողմերը քննարկեցին Վրաստանի եւ Վատիկանի միջեւ երկկողմ հարաբերությունների խորացման հեռանկարները: Հանդիպման ավարտին Վրաստանի նախագահն ու Հռոմի Պապը հանդիպում ունեցան Վրաստանի գործադիր եւ օրենսդիր մարմինների, քաղաքացիական հասարակության եւ դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչների հետ:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

## ՎԻՐԱՆՍՅՈՒՆ ԹԵՄԸ ՄԱՍՆԱԿՅԵՉ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՀՈՒՄԻ ՊԱՊԻՆ ԵՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՍԱՌՈՒՄՆԵՐԻՆ

Սրբազան քահանայապետ Ֆրանցիսկոս Պապի Վրաստանում երկօրյա իյուրընկալության պատվին կազմակերպված միջոցառումներին իր մասնակցությունն ունեցավ Վիրահայոց թեմը:

Թեմակալ առաջնորդ Վազգեն Եպիսկոպոս Սիրախանյանը ներկա գտնվեց Վրաստանի նախագահի նստավայրում Սրբազան քահանայապետի հետ երկրի նախագահի, օրենսդիր եւ գործադիր մարմինների ղեկավարների հանդիպմանը: Այնուհետեւ, Վազգեն Սրբազանը, Վրաստանում գործող տարբեր կրոնական ղեկավարների հետ, Վրաց Ուղղափառ եկեղեցու Պատրիարքարանում մասնակցեց նաեւ Համայն Վրաստանի Կաթոլիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդի կողմից Հռոմի Պապի

թեմակալ առաջնորդ Վազգեն Եպիսկոպոս Սիրախանյանը ներկա գտնվեց Վրաստանի նախագահի նստավայրում Սրբազան քահանայապետի հետ երկրի նախագահի, օրենսդիր եւ գործադիր մարմինների ղեկավարների հանդիպմանը: Այնուհետեւ, Վազգեն Սրբազանը, Վրաստանում գործող տարբեր կրոնական ղեկավարների հետ, Վրաց Ուղղափառ եկեղեցու Պատրիարքարանում մասնակցեց նաեւ Համայն Վրաստանի Կաթոլիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդի կողմից Հռոմի Պապի

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)



## ԴԱՎԻԹ ՈՒՍՈՒԹԱՇՎԻԼԻ. «ՎԱՂԸ՝ ՄԵՎ ՕՐՈՎ ԻՇՆԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿՎԵՐԱՂԱՐՁՎԻ ԺՈՂՈՎՐԴԻՆ»

Հոկտեմբերի 8-ի խորհրդարանական ընտրությունների նախօրեին, հատուկ ուղերձով հանդես եկավ Վրաստանի խորհրդարանի նախագահ, հանրապետական կուսակցության լիդեր Դավիթ Ուսուփաշվիլին:

«Վաղը՝ հոկտեմբերի 8-ին, իշխանությունը մեկ օրով կվերադարձվի ժողովրդին, որպեսզի այն իշխանությունը վստահի իր կողմից ընտրվածներին: Դա պետության կյանքում կարեւորագույն ակտ է, որի բարձր մակարդակով կատարումը կբարձրացնի մեր ազգային ինքնասիրությունը: Դրա համար ծայրաստիճան կարեւոր է, որ քաղաքական լիդերները եւ քաղաքական կուսակցությունները հստակորեն հայտարարեն, որ իրենք ճանաչում են ընտրական վարչակազմի կողմից անցկացված ընտրությունների արդյունքները եւ առաջիկա գործունեությունում չեն հենվի իրենց կողմից կատարած ուսումնասիրությունների կամ սեփական հաշվարկով ստացված տվյալների վրա: Դա կարեւոր նշանակություն ունի: Մենք, անտարակույս, կարող ենք վստահել վրացական պետությանը եւ ընտրական վարչակազմին, քանզի տեսնում ենք, որ Վրաստանը կարեւոր քայլեր է կատարել քաղաքական ազատության, ընտրական ժողովրդավարության ապահովման ուղղությամբ»,- հայտարարեց Դավիթ Ուսուփաշվիլին եւ հավելեց, որ նշանակալից է նաեւ, որպեսզի պետական հաստատություններն ու հանրային աշխատողները լիքն են բարձր մակարդակի վրա:

Նշանակալից է, որպեսզի բոլոր պետական հաստատությունները եւ ոչ միայն իրավապահ մարմինները, անկողմնակալ եւ մանրակրկիտ կատարեն իրենց սահմանադրական գործառնությունները, ծառայեն Վրաստանին եւ վրացական պետությանը եւ ոչ թե որեւէ քաղաքական կուսակցության, դրա լիդերին,- ընդգծեց Դավիթ Ուսուփաշվիլին:

## ԻՆՆԵՐՈՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆ. ՈՒՄ ԵՆՔ ԸՆՏՐԵԼՈՒ, ԻՆՉ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ, ՈՐ ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԻՉ



Հոկտեմբերի 8-ին Վրաստանում կանցկացվեն ութերորդ գումարման խորհրդարանի ընտրությունները: Այդ օրը քառամյա ժամկետով ընտրվելու է 150 պատգամավորից բաղկացած նոր խորհրդարան: Հոկտեմբերի 8-ին կանցկացվեն նաեւ Աջարիայի Ինքնավար Հանրապետության Գեորգույն խորհրդի ընտրությունները:

որոնք հաղթահարում են 5 տոկոսի արգելազիծը: Մնացած 73 մեծամասնական պատգամավորներն ընտրվում են միամանդատ ընտրական տարածքներում: Մեծամասնական պատգամավորության 73 մանդատի համար պայքարում են գրանցված 816

թեկնածուները: Մեծամասնական պատգամավորության թեկնածուին առաջին փուլում հաղթելու համար անհրաժեշտ է ստանալ համապատասխան ընտրատարածքում ընտրություններին մասնակցող ընտրողների քվեների 50

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

Նշենք, որ Վրաստանում գործում է ընտրական համակարգ: Խորհրդարանի 150 պատգամավորներից 77-ը ընտրվում է համամասնական ընտրակարգով, այն կուսակցությունների ընտրական ցուցակներից,

ԵՎՐԱՍԻՆՏԵՐՈՒՄ

ԱՆԱՅՑԵԳՐԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՀԱԶՈՂՈՒԹՅԱՄԲ Է ԸՆԹԱՆՈՒՄ


Հոկտեմբերի 5-ին Եվրամիության խորհուրդը համաձայնեցրեց Վրաստանի քաղաքացիների համար անայցեգրային պայմանագրի հաստատման հարցով բանակցային գործընթացը:

Ինչպես նշված է տարածված հաղորդագրության մեջ, Եվրամիության մշտական ներկայացուցիչների կոմիտեն հաստատել է Վրաստանի համար անայցեգրային պայմանակարգի շնորհման եվրահանձնաժողովի առաջարկությունը: Տարածված հաղորդագրության կա-

պակցությամբ, Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին Վրաստանի բնակչությանը շնորհավորեց անայցեգրային պայմանակարգի գործընթացի հաջողության առթիվ: Ինչպես ասված է վարչապետի հայտարարության մեջ, Եվրամիության երկրները վերջնականապես

պայմանավորվել են Վրաստանի քաղաքացիների անայցեգրային պայմանակարգի շնորհման հարցում:

- Կարելոր նշանակություն ունի, որ ընտրություններից մի քանի օր շուտ մենք Եվրամիությունից ստացանք նման ոգեշնչող ուղերձ, իսկ դա նշանակում է, որ մեր կողմից անցկացված բարեփոխումներն ու ձեռքբերումները ճանաչվել են,- ասված է վարչապետի հայտարարության մեջ:



ՌՈՒՍԱՍՏԱՆ

ՎՅԱԶԵՍԼԱԿ ՎՈՂՈՂԻՆԸ՝ ՊԵՏՏՐՈՒՄՅՈՒՆԻ ՆԱԽԱԳԱՀ

Հոկտեմբերի 5-ին Ռուսաստանի Դաշնության նորընտիր Պետական Դուման 52-ամյա Վյաչեսլավ Վոլոդինին ընտրեց երկրի օրենսդիր մարմնի նախագահ:

Պետդուման «Եղինայա Ռոսիայի» առաջադրած Վյաչեսլավ Վոլոդինին նախագահ ընտրեց այլընտրանքային սկզբունքով:

Վյաչեսլավ Վոլոդինը 2010-2011 թվականներին զբաղեցնում էր ՌԴ կառավարության աշխատակազմի ղեկավարի եւ փոխվարչապետի պաշտոնը, իսկ 2011 թվականից ՌԴ նախագահի աշխատակազմի ղեկավարի առաջին տեղակալն էր:

ԵՍՏՈՆԻԱ

ԿԵՐՍ ՎԱՅՈՒԼԱՅԻՆ՝ ԵՐԿՐԻ ՆԱԽԱԳԱՀ

Եստոնիայի խորհրդարանում հոկտեմբերի 3-ին, անայլընտրական հիման վրա, նախագահ է ընտրվել Եվրոպայի հաշվիչ հանձնաժողովում երկրի ներկայացուցիչը՝ Կերստի Կայլուլայը: Նրա օգտին քվեարկել են 101 պատգամավորներից 81-ը, ընտրվելու համար նրան բավարար կլինեին ապահովել պատգամավորական կորպուսի կազմի առնվազն երկու երրորդի աջակցությունը կամ ստանալ ոչ պակաս, քան 68 ձայն: 17 պատգամավոր չլրացված քվեաթերթիկներ է մետել քվեատուփերի մեջ:

ՄՍԿ

ԾՈՎՈՎ ԵՎՐՈՂՎ ՀԱՍՆԵԼՈՒ ՓՈՐՁ ԿԱՏԱՐԵԼԻՄ՝ ՄԵԿ ՏԱՐՈՒՄ ԶՈՂՎԵԼ Է 3,5 ՀԱԶԱՐ ՄԱՐԴ

Այս տարի 3,5 հազարից ավելի մարդ է զոհվել կամ անհետ կորել ծովային ճանապարհով՝ Եվրոպա հասնելու փորձ կատարելիս: Այդ մասին հոկտեմբերի 4-ին հայտնել են Միգրացիայի միջազգային կազմակերպությունում (ՄՄԿ):

Կազմակերպության տվյալներով, Միջերկրական ծովում զոհվածների կամ անհետ կորածների թիվն այս տարի կազմում է 3502:

Դրա հետ մեկտեղ, ծովային ճանապարհով Եվրոպա ժամանած փախստականների ընդհանուր թիվը կազմել է 302 հազար 975: Նրանց մեծ մասին ընդունել են Հունաստանը (167 հազար 74 մարդ) եւ Իտալիան (132 հազար 69 մարդ):

ԱՅՑ

ԿԱՐԵՎՈՐՎԵՑ ԲՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՈՒԹՅԱՆ ԽՈՐԱՅՈՒՄԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

յացուցիչների հետ: Վրաստանի պատրիարքարանում կայացած հանդիպմանը՝ Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարքը կարելուրեց երկու քույր եկեղեցիների միջև համագործակցության խորացումը ընդգծելով, որ արդի գլոբալ մարտահրավերների պայմաններում, քրիստոնեա եկեղեցիների փոխգործակցությունը վճռորոշ նշանակություն ունի:



նելով ընդունելության համար, հայտարարեց, որ Վրաստանը, որպես քրիստոնեական հնագույն երկիր, առանձնակի դեր ու նշանակություն ունի քրիստոնյա աշխարհի ջանքերի համատեղության եւ համաշխարհային մարտահրավերներին համատեղ դիմագրավելու գործում: Նա Լիա երկրորդին երախտագիտություն հայտնեց այդ ուղղությամբ գործադրած ջանքերի համար:

Կայացած հանդիպումներին ներկա էր նաեւ Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն Եպիսկոպոս Սիրզախանյանը:

Իր հերթին, Ֆրանցիսկոս Առաջինը, շնորհակալություն հայտարարեց:

ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԸ ՄԱՍՆԱԿՅԵՑ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՀՈՒՄԻ ՊԱՊԻՆ ՆԿԻՐՎԱԾ ՄԻՋՈՒՄՈՒՄՆԵՐԻՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

պատվին կազմակերպված ընդունելությանը: Հոկտեմբերի 2-ին, Վիրահայոց թեմի հավատացյալները՝ Թեմի առաջնորդի գլխավորությամբ, ներկա գտնվեցին Թբիլիսիի Սիխեիլ Սեսխու անվան մարզադաշտում Սորբազան քահանայապետի ձեռամբ մատուցված Սուրբ պատարագին, որի ավարտին Վազգեն Եպիսկոպոսը Հոմի Ֆրանցիսկոս Պապին փոխանցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի եղբայրական ողջույնները:



ՄՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀՈՂԵՐԻ ԳՐԱՆՅԱՆ ԱՆՆԱԽԱԳԵՊ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱԶՈՂ ԸՆԹԱՅՔ ՈՒՄԻ




Վրաստանի արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանին հանրագումարեց օգոստոսի 1-ին մեկնարկած հողերի գրանցման աննախադեպ նախագծի երկու տարվա ընթացքի արդյունքները:

Ինչպես նշեց նախարարը, երկրի ողջ մասշտաբով, օգոստոսի 1-ից հետո անցած ժամանակահատվածում, հանրային ռեեստր է մուտք գործել 74838 դիմում: Այդ թվաքանակից 20051-ի դեպքում, ռեեստրը ինքն է հավաքել անհրաժեշտ փաստաթղթերը եւ, առանց ձգձգումների, գրանցել հողերը: 40065 դեպքերում, հանրային ռեեստրը քաղաքացի-

ների հետ միասին, տարբեր գերատեսչություններում փնտրել է անհրաժեշտ փաստաթղթերը եւ, նախարարի հավաստմամբ, այդ դիմումների մեծ մասը եւս կբավարարվի: Ինչպես նշեց Թեա Ծուլուկիանին, ներկա դրությամբ, քննարկման փուլում է գտնվում 8433 դիմում:

ՄՊԱՍԱՐԿՈՒՄ

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՊԱՍԱՐԿՈՒՄՆԵՐԸ՝ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՏԱՆԸ



Հոկտեմբերի 5-ից Արդարադատության տան կողմից մատուցվող սպասարկումներին ավելացան եկամուտների ծառայության երկու նոր կետեր, տեղեկանք՝ բանկային հաշվի վերաբերյալ եւ տեղեկանք՝ հարկային պարտքերի մասին: Այսուհետ, Արդարադատության տան բոլոր մասնաճյուղերում վերոնշյալ սպասարկումները մատչելի են:

Երկկողմ համագործակցության հուշագիրը ստորագրեցին Վրաստանի ֆինանսների նախարարի առաջին տեղակալ, եկամուտների ծառայության պետ Գիորգի Թաբուաշվիլին եւ Արդարադատության տան գործադիր տնօրեն Գիվի Ագաուրաշվիլին: Համագործակցության շրջանակներում, արդեն աշխատանքներ են տարվում բնակչությանը այլ նշանակալի սպասարկումներին մատուցման ուղղությամբ, ինչը թույլ է տալիս արդարադատության տներում առավել լայնորեն ներկայացնել եկամուտների ծառայության սպասարկումները: Վերոնշյալ սպասարկումներ-

րի փոխադրումը Արդարադատության տան նշանակալիորեն դյուրացնում է եկամուտների ծառայության սպասարկումների մատչելիությունը: Վրաստանի այն տարածաշրջանների բնակիչները, որտեղ գործում են Արդարադատության տան մասնաճյուղեր, կարող են առանց քաղաքից դուրս գալու տեղեկանքներ ստանալ բանկային հաշիվների եւ հարկային պարտքերի վերաբերյալ, ինչը թույլ է տալիս ժամանակ եւ ֆինանս տնտեսել: Դրանով սպասարկումը դարձել է առավել հարմարավետ, եւ թույլ է տալիս այն ստանալ կարճ ժամանակահատվածում:

Սպասարկումների ստացման դիմումների ընդունումը եւ պատրաստ տեղեկանքի հանձնումն իրականացնում են Արդարադատության տան բոլոր մասնաճյուղերի (բացառությամբ՝ Մեստիայի Արդարադատության տան) արագ սպասարկման օպերատորները: Վերոնշյալ սպասարկումներն աշխատանքային տալը օրվա ընթացքում ներկայացվում են անվճար: Սակայն, տեղեկանքներն արագացված կարգով ստանալ ցանկացողների տրվում է հնարավորություն տեղեկանքը ստանալ երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ վճարելով տասը լարի, մեկ օրվա ժամկետում



ստանալու համար՝ քաղաքացիները վճարելու են քսան լարի: Հատկանշական է, որ գործընկեր գերատեսչությունների միջև համագործակցության հիման վրա, Արդարադատության տանը կներդրվեն եկամուտների ծառայության եւս մի քանի սպասարկումների կետեր: Միաժամանակ, ֆինանսների նախարարության եկամուտ-

ների ծառայության սերվիս կենտրոնում ծրագրվում է Արդարադատության նախարարությանը ներկայացնել մի շարք էլեկտրոնային սպասարկումներ: Մասնավորապես՝ իրավաբանական անձի գրանցում-գրանցումից հանում, քաղվածքի հանձնում եւ այլն:

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԻՒՍ

Շարաքից շարաք. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՊԵՏՔՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՉՈՐԳ ՏԱՐԻ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿՍՏԱՆԱՆ ԱՌՈՂՁԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ, ՏԱՐԱԾԱՆԵՐՉԱՆԱՅԻՆ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ ԵՎ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ



Վրաստանի կառավարությունը խորհրդարանի քննարկմանն է ներկայացրել 2017 թվականի պետական բյուջեի նախագծի առաջին տարբերակը: Ըստ փաստաթղթի, ընթացիկ տարվա բյուջեի համեմատությամբ, 2017 թվականի բյուջեն ավելացվել է 410 միլիոնով եւ կազմել՝ 10 555 միլիոն լարի:

Լիոնով գերազանցում է ընթացիկ տարվա բյուջեում հատկացված գումարին:

Մինչև 1 086 միլիոն կհասցվի տարածաշրջանային զարգացման եւ ենթակառուցվածքի մատակարարության բյուջեն: Նշենք, որ այս տարի այդ նպատակների համար հատկացվել էր 950 միլիոն լարի: Մասնավորապես, ծրագրվում է ավելացնել ճանապարհային ենթակառուցվածքի ֆինանսավորումը:


Հաջորդ տարի ծրագրված է ավելացնել նաեւ կրթության եւ գիտության մատակարարության բյուջեն: Այն կկազմի 1 025 միլիոն լարի: Ընդհանուր կրթության ֆինանսավորման համար հատկացվում է 609 միլիոն լարի, որը ներառում է նաեւ ուսուցիչների բարձրացված աշխատավարձը:

Բյուջեի նախագծում 19,7 միլիոն լարի է նախատեսված «Արտադրի» Վրաստանում» ծրագրի համար:

2017 թվականի պետբյուջեի նախագծում նախատեսված են առանձին մատակարարությունների ֆինանսավորման կրճատումներ: Մասնավորապես, կկրճատվեն գյուղատնտեսության մատակարարության, էներգետիկայի, ֆինանսների, պատիժների կատարման, արդարադատության, մշակույթի եւ հուշարձանների պահպանության, բնապահպանության, արտաքին եւ ներքին գործերի մատակարարությունների բյուջեները:

Փոփոխություններ չեն կատարվել փախստականների եւ վերաբնակեցման մատակարարության, հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության պետմատակարարության աշխատակազմի, եվրոպական, եվրատլանտյան կառույցների ինտեգրման պետմատակարարի անձնակազմի, ինչպես նաեւ սփյուռքի գործերով պետմատակարարի անձնակազմի բյուջեներում:

Օրենսդիր մարմինը բյուջեի նախագծի քննարկմանը ձեռնամուխ կլինի հոկտեմբերի երկրորդ կեսին:



ՍԱՀՄԱՆԱՂՐԱՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԼԻԱԳՈՒՄԱՐ ՆԻՍԱԸ ԶԿԱՅԱՑԱԿ

Անհրաժեշտ քվորումի բացակայության պատճառով, հոկտեմբերի 6-ին, ծրագրված Սահմանադրական դատարանի պլենումի կազմակերպչական հանդիպումը չկայացավ: Նիստի անցկացման համար անհրաժեշտ էր առնվազն վեց դատավորի ներկայություն, սակայն նիստին ներկայացել էին ընդամենը 4-ը:

Նշենք, որ օրենսդրության համաձայն, Սահմանադրական դատարանի լիազորմար նիստում, նորընտիր դատավորներն ընտրելու էին դատարանի նոր նախագահին: Նախորդ նախագահ Գիորգի Պապուաշվիլու ժամկետը լրացավ սեպտեմբերի 30-ին:

ԹՊՅ-Ի ԿԱՆՑԼԵՐ Ե ՆՇԱՆԱԿՎԵԼ ՆՈՒՆՈՒ ՕՎԱՅԱՆՆԻԿՈՎԱՆ

Թբիլիսիի Իվանե Չավախիշվիլու անվան պետական համալսարանի նորանշանակ ռեկտոր Գիորգի Շարվաշիձեն հասարակայնությանը ներկայացրեց բուհի վարչության ղեկավար, նոր կանցլեր Նուրու Օվսյանիկովային: Բուհում նոր կանցլերի ընտրությունը անցկացվել էր սեպտեմբերի 30-ին:

«Կրթության մասին» օրենքում կատարված փոփոխությունների համաձայն, այդ օրն ընտրվեցին նաեւ համալսարանի կառավարման մարմնի բոլոր ներկայացուցիչները: Ընտրություններից հետո, կառավարման մարմնի ներկայացուցիչները ներկայումս կազմված է 36, իսկ ներկայացուցչական խորհուրդը՝ 72 անդամից:

ՀՈՂԱՄԵԼԵԿՏՐԱՎԱՅԱՆ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Վրաստանի Գորի քաղաքի մերձակայքում բացվել է առաջին հողմային էլեկտրակայանը՝ «Քարթլի»-ն:

Կայանի բացման արարողությանը մասնակցեց վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին:

Այսօրվա դրությամբ, էլեկտրակայանի սահմանված հզորությունը 20,7 մեգավատտ է, իսկ հեռանկարում այն կարող է հասնել 300 մեգավտ-ի: Նախագիծն իրագործել է Վրաստանի էներգետիկայի զարգացման հիմնադրամը հանրապետության էներգետիկայի նախարարության հետ համագործակցությամբ: Նախագծի ընդհանուր արժեքից 24 մլն դոլար հատկացվել է Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի կողմից, իսկ 10 մլն դոլարը՝ Վրաստանի էներգետիկայի զարգացման հիմնադրամը եւ նավթի ու գազի կորպորացիան:

ՓՐԿՎԵՑ ԳՈՒՄԲՈՒՐՊՅԻ ՏԱՃԱՐԸ

Ինչպես տեղեկացրել է «Ռեզոնանսի» թերթը, սկսվել է Ախալքալաքի մունիցիպալիտետի Գումբուրդո գյուղում գտնվող տաճարի վերանորոգումը, եւ տաճարին այլևս վտանգ չի սպառնում: Ներկա դրությամբ, տաճարում իրականացվում են վերանորոգման առաջին փուլի աշխատանքները:

Գումբուրդոյի տաճարը 10-րդ դարի նշանավոր հուշարձաններից է: Տաճարում լայնածավալ վերականգնման աշխատանքներ չեն իրականացվել խորհրդային շրջանից հետո:

ԿՐԹԱԿԱՆ

ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՊԱՔԱՂԱՔԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԿԱՐԵՎՈՐ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ



«Ուսուցչի օրվա» միջոցառմանը, մանկավարժների հետ հանդիպման ժամանակ, Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին իր ելույթում ընդգծեց կրթության համակարգի ապաքաղաքականացման կարեւորությունը:

խոսքի ձեռնարկը յուրաքանչյուր հաջորդ տարիներին մտադիր ենք է՛լ ավելի ակտիվացնել գործունեությունը,- հայտարարեց վարչապետը:

Իր հերթին, Վրաստանի կրթության եւ գիտության նախարար Ալեքսանդր Ջեջելավան անդրադարձավ ծնողական ժողովի թեմային՝ նշելով, որ այդ ձեռնարկն արդեն հնացել է եւ նորացման կարիք ունի:

- Երեխաների վարքի կամ առաջադիմության մասին

հանրային քննարկումը սխալ է,- հայտարարեց կրթության նախարարը եւ հավելեց,- դուք՝ որպես լավագույն ուսուցիչներ, դա անում եք, անհատապես աշխատանք եք իրականացնում ծնողների հետ: Մենք մտադիր ենք դա օրինականացնել, հետեւաբար, սա կդառնա դասաժամերի եւ կրեդիտների աղբյուր: Ծնողների հետ լրացուցիչ աշխատանքը կորվի կամավոր սկզբունքի վրա:

ՔՐԵՍԿԱՆ

ԻՐԱՎԻՃԱԿԻ ԱՊԱԿԱՅՈՒՆԱՑՄԱՆ ՈՒՂՂԱԾ ՍԱԴՐԱՆՔ

Հոկտեմբերի 8-ի խորհրդարանական ընտրություններին նախորդած իրադարձությունները միանշանակ մատնանշում են, որ առանձին ուժեր ձգտում են հնարավորինս սրել իրավիճակը, մարդկանց մոտ արմատավորել վախի, անօգնականության, անելանելիության եւ, վերջին հաշվով, անտարբերության տրամադրվածությունը:

ՊԱՅԹԵՑՐԻՆ ԳԻՎԻ ԹԱՐԳԱՄԱՋԵԻ ԱՎՏՈՍԵՔԵՆԱՆ

Սեպտեմբերի 4-ի երեկոյան, Թբիլիսիի կենտրոնում, անհայտ անձինք պայթեցրին «Միասնական ազգային շարժումից» խորհրդարանի պատգամավոր, այդ կուսակցության ղեկավարներից մեկի Գիվի Թարգամաձեի ավտոմեքենան:

Պատգամավորի ավտոմեքենան պայթել է «Միասնական ազգային շարժում» նախկին կառավարող կուսակցության գրասենյակից ոչ հեռու: Պայթյունի պահին ավտոմեքենայում եղել են Թարգամաձեն ու նրա վարորդը: Նրանք ստացել են թեթեւ վնասվածքներ, լրջորեն տուժել է հինգ անցորդ: Պայթյունի հետեւանքով, վնասվել է նաեւ մոտակայքում գտնվող տասը ավտոմեքենա:

Արձագանքելով տեղի ունեցածին՝ Վրաստանի նախագահ Գիորգի

Մարգվելաշվիլին որակեց դա՝ որպես ահաբեկչական ակտ, եւ հայտարարեց. «Սա կրիմինալի պայքարն է հասարակության դեմ, կրիմինալի պայքար՝ քաղաքական գործիչների դեմ: Սա կրիմինալի գործն է նորմալ քաղաքական ժողովրդավարական գործընթացի դեմ»:

Իր հերթին, Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին վստահեցրեց, որ այդ գործողության կազմակերպիչներն ու կատարողները անպայմանորեն պատասխան կտան օրենքի առաջ:

- Գիմուն էմ նրանց, ովքեր ծրագրել ու իրականացրել են այդ սադրանքը. դուք անպայմանորեն շատ խիստ պատասխանատվություն եք կրելու օրենքի առաջ,- հայտարարեց վարչապետը:

ԿՐԱԿԵՑԻՆ ԻՐԱՎԻՍ ՕՔՐՈՒՄՇՎԻԼՈՒ ՎՐԱ

Հոկտեմբերի 2-ին, Գորիում, ընտրողների հետ հանդիպման ժամանակ, անհայտ անձը իրազեկեց կրակ է բացել մեծամասնական պատգամավորության թեկնածու, Վրաստանի պաշտպանության նախկին նախարար Իրակլի Օքրուաշվիլու վրա: Վիրավորվել են Օքրուաշվիլու պաշտպանության անդամներից մեկը եւ մի ակտիվիստ, որոնց տեղափոխել են Գորիի հոսպիտալ:

Գործ է հարուցվել Վրաստանի քրեական օրենսգրքի 117 (առողջության կանխամտածված վնասում) եւ 236 (իրազեկի ապօրինի ձեռքբերում, կրում եւ պահում) հոդվածներով:

Հոկտեմբերի 4-ին 53-ամյա՝ նախկինում բազմիցս դատապարտված Ալեքսանդր Ինդուաշվիլին ներկայացավ ոստիկանություն եւ հայտարարեց, որ նախընտրական հանդիպման ժամանակ ինքը իրազեկեց կրակ է բացել Գորիից պատգամավորության թեկնածու, Վրաստանի նախկին պաշտպանության նախարար Իրակլի Օքրուաշվիլու վրա:

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՓԱՌԱՏՈՆ

ԵՐԵՎԱՆԻ ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԱՏՐՈՆԻ ՀՐԱՇԱԽ ԲԵՄԵԼԸ՝ ԹԲԻԼԻՍՅԱՆ ՄԻՋԱՉԳԱՅԻՆ ՓԱՌԱՏՈՆԻՆ

Սեպտեմբերի 24-ից մեկնարկել է Թբիլիսիի միջազգային թատերական 8-րդ փառատոնը, որը կտեսի մինչև հոկտեմբերի 8-ը:

Փառատոնի կազմակերպիչներն են Վրաստանի մշակույթի նախարարությունն ու քաղաքապետարանը: Ահա արդեն գրեթե տասներորդ տարին է, ինչ միջոցառումը երկրի մշակութային կարևորագույն իրադարձություններից է համարվում, որի նպատակը ոչ միայն «լեզենդար» ներկայացումներ եւ կատարումներ ցուցադրելն է, այլ նաեւ բանավեճի ու քննարկումների հնարավորություն է, թատերական նոր ձևերի, դերասանի, հանդիսատեսի ու արժեքների բացահայտում: 12 իրար չնմանվող մշակութային բուռն օրերի ընթացքում հանդիսատեսն առաջին անգամ, բաց երկնքի տակ եւ մայրաքաղաքի տարբեր թատրոններում, հնարավորություն ունի դիտելու Հայաստանի, Լեհաստանի, Գերմանիայի, Ուկրաինայի, Մեծ Բրիտանիայի, Ռուսաստանի, Ճապոնիայի, Հնդկաստանի թատրոնների բեմականացումները:

Հայաստանը փառատոնին ներկայացնում էր Գ.Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնը, որը հոկտեմբերի 3-ին հանդիսատեսի դատին հանձնեց Վիլյամ Շեքսպիրի «Ջոն Արքա» ողբերգությունը:

Նշենք, որ ներկայացման առաջնախաղը կայացել է 2012 թվականի մայիսին Լոնդոնի աշխարհահռչակ «Գլոբուս» թատրոնի բեմում, Համաշխարհային Շեքսպիրյան փառատոնի շրջանակներում, եւ արժանացել կազմակերպիչների, շեքսպիրագետների ու շարքային անգլիացիների ամենաբարձր գնահատականին: Ներկայացման արժեքավոր լինելու փաստը լայնորեն արձագանքել են նաեւ բիրտանական ՋԼՄ-ները:

Ամուրամալի փաստ է, որ Վիլյամ Շեքսպիրը աշխարհի թատերագիրն է, ում ստեղծագործությունները բոլոր ժողովուրդների համար թանկ ու սիրելի են: Ահա թե ինչպես է գնահատել հանձնարել անգլիացուն Հովհաննես Թումանյանը. «Շեքսպիրը դարձել է մի չափ ազգերի զարգացման աստիճանը որոշելու համար: Եթե մի ժողովուրդ նրան չի թարգմանում, կնշանակի՝ տգետ է, եթե չի հասկանում, կնշանակի՝ տհաս է, եթե մի լեզու նրա վրա չի գալիս, կնշանակի՝ տկար է»:

Շեքսպիրի դրամատիկ երկերի հայկական բեմադրությունների պատմությունն սկսվել է 1866-ից, Թբիլիսիում Թովմաս եւ Պայծառ Ֆասուլաճյանների հատկապես ներկայացրած «Վենետիկի վաճառականով»: Շեքսպիրյան երկի անդրամիկ ամբողջական «Մակբեթ» բեմադրությունը իրականացրել է Հ.Վարդույանը 1867-ին, եւ ինքն էլ հանդես է եկել գլխավոր դերում, իսկ հայ առաջին Օթելլոն Գ.Չմշկյանն էր՝ 1867թ.: Շեքսպիրի հերոսների փայլուն կերպարներ են ստեղծել մեր իրականության նշանավոր դերասաններ Պետրոս Ադամյանը, Սիրանուշը, Վահրամ Փափազյանը, Հրաչյա Ներսիսյանը, Արուս Ոսկանյանը, Մետաքսյա Սիմոն-

յանը եւ այլք: Անդրադառնալով գրողի ստեղծագործությանը՝ պետք է նշել, որ նրա կա-



տակերգությունների հիմնական թեման սերն է, որ հաղթահարում է ծնողների բռնության, նախանձի, սրտի անբացատրելի քմայքների խոչընդոտները, իսկ ողբերգություններում արտացոլված են կյանքի դժվարությունների իրական պատկերը: Ողբերգականը ներկայացված է որպես մարդկանց քստմեղի չարագործությունների արգասիք:

Վերադառնալով սունդուկյանցիների «Ջոն Արքա» պիեսին նշենք, որ, ավելի քան երեսնամյա ընդմիջումից հետո, թատրոնը կրկին իր խաղացանկ բերեց «Լեզենդ Մակբեթի մասին» կոչվող ներկայացումը, իսկ այսօ էլ՝ Խորեն Աբրահամյանից հետո, անդրադարձ է կատարել «Ջոն Արքային» թատրոնի գլխավոր ռեժիսոր, Հայաստանի վաստակավոր գործիչ Տիգրան Գասպարյանի նորարարական բեմադրությամբ եւ Խաչիկ Դաշտենցի դասական թարգմանությամբ:

Դերերում ընդգրկված են. Ջոն Արքա՝ ՀՀ վաստակավոր արտիստ Ա.Մարության, Կոնստանս՝ ՀՀ վաստակավոր արտիստուհի Ա.Վարդանյանը, Էլիսոն՝ ՀՀ վաստակավոր արտիստուհի Ն.Խեյրամյանը, Արքա Ֆիլիպ՝ Ա.Խաչատրյանը, Կարդինալ Պանդոֆ՝ Ա.Մարգարյանը, Բլանշ՝ Լիանա Արիստակյանը, Արթուր՝ Ն.Հայկազյանը, Լյուդովիկ՝ Դ.Գաս-

պարյանը: Բաստարդի դերում հանդես եկավ ծնունդով թբիլիսցի, մինչև 20-րդ դարի 60-ական թթ. Թբիլիսիի հայկական դրամատիկական, ապա Երեւան տեղափոխված եւ Սունդուկյանի անվան թատրոնի աշխարհահռչակ դերասան, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Բաբկեն Ներսիսյանի որդին՝ Հայաստանի վաստակավոր արտիստ Տիգրան Ներսիսյանը, իսկ Հուբերտի կերպարը մարմնավորեց եւս մեր թատրոնի նախկին դերասան Ալբերտ Սաֆարյանը:

Պիեսի համար երաժշտություն է գրել Է.Հայրապետյանը, նկարիչներն են Վ.Թեւանյանը, Մ.Սարգսյանը:

Ինչպես նշեցին վրաց եւ փառատոնի մասնակից մի շարք երկրների թատերագետները, «Ջոն Արքա» բեմադրության թբիլիսյան բեմելը նրանք հրաշալի մատուցեցին հանդիսատեսին, ինչպես դերասանական բարձր կատարողականությամբ, պիեսում տեղ գտած դեպքերի արդիական, հետաքրքիր լուծումներով, երաժշտական ձեւավորմամբ՝ կենդանի հայկա-



ԱՂԱՅԱՆՑԻՆԵՐԻ ՀՅՈՒՐԱԽԱՂԱՅԻՆ ՆՈՐ ԷՋԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Ինչպես նշել էինք «Վրաստան» թերթի ճախարհի համարում, Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնը հոկտեմբերի 1-ից 4-ը հյուրախաղային ծրագրով հանդես եկավ Երեւանի Պատանի հանդիսատեսի թատրոնում: Մեզ հետ զրույցում թատրոնի գեղարվեստական ղեկավար Արմեն Բայանդուրյանը մասնավորապես նշեց.

«Ներկայացանք երեք բեմադրությամբ՝ Ռիչարդ Նեշի «Անձրե վաճառողը» (բմբ. Լեւոն Ուզունյանի), Գուրգեն Խանջյանի «Անմեղսունակների պարը» (բմբ. Ռոման Մաթիաշվիլու) եւ Մարի Լադոյի «Սովորական պատմություն» (բմբ. Արմեն Բայանդուրյանի): Մեր թատրոնի անունից կցանկանայի երախտագիտություն հայտնել մեզ աջակցողներին՝ Հայաստանի թատերական գործիչների միության նախագահ Հակոբ Ղազանյանին, Երեւանի քաղաքապետարանին եւ տիկին Ռոզա Ծառուկյանին: Նշեն, որ երեք օր անընդմեջ մեր դերասանները խաղացին լեվի-լեցուն դահլիճում, որտեղ ներկա գտնվեցին նաեւ հայկական թատերական արվեստի կարկառուն դեմքեր: Արժանացանք մեզ համար ամենաբարձր գնահատականի, դա այն հիացմունքն էր, որը նվաճեցին մեր թատրոնի երիտասարդ դերասանները՝ ներկա եւ վաղվա մեր օրը: Հոկտեմբերի 20-ից հետո, նույն ներկայացումներով, մեր թատրոնը կներկայանա նաեւ Վանաձորի եւ Գյումրիի թատրոններում: Արդեն հետդարձին, աղանյամքից ենթադրաբար շրջապայելու են Վրաստանի տարբեր քաղաքներում խաղացանկում ունենալով նաեւ Նորար Դումբաձեի «Մեղադրական եզրակացություն» (բմբ. Արմեն Բայանդուրյանի) վրացալեզու ներկայացումը:

ԳԱՅԱՆԵ ԲՈՍԱՆՑՅԱՆ

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 8-ԻՆ՝ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

ԻՆՆԵՐՈՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆ. ՈՐԻՄ ԵՆՔ ԸՆՏՐԵԼՈՒ, ԻՆՉ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ, ՈՐ ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԻՉ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

տոկոսից ավելին: Երկրորդ փուլն անցկացվում է լավագույն արդյունքի հասած առաջին երկու թեկնածուների միջև, այն դեպքում, եթե նրանցից ոչ մեկը առաջին փուլում չի հաղթահարել 50 տոկոսի արգելագիծը: Երկրորդ փուլը անցկացվում է առաջին փուլից հետո, առավելագույնը՝ 25 օրվա ընթացքում:

Ընթացիկ ընտրություններում գործարկվում է օրենսդրական եւս մի փոփոխություն: Դեռեւս ընթացիկ տարվա սկզբին խորհրդարանը պաշտպանեց ընտրական տարածքների ձեւավորման նոր կարգը, որի արդյունքում, ընտրողների քանակությամբ պայմանավորված՝ ընտրատարածքների միջև անհավասարությունը զգալիորեն նվազեց առանձին ընտրատարածքների միացման կամ բաժանման պատճառով: Արդյունքում, մեծամասնական ընտրատարածքների նոր սահմանները մեծ մասամբ արդեն չեն համընկնում մունիցիպալային սահմաններին: Յուրաքանչյուր ընտրատարածքում ընտրողների թիվը տատանվում է 41300-ից մինչև 53400-ը:

Ինչպես նշվեց համամասնական ընտրակարգով, այսինքն՝ կուսակցական ցուցակներով, ընտրությունների արդյունքներով բաշխվելու է 77 մանդատ: Այդ մանդատները կստանան ընտրական բոլոր այն սուբյեկտները, որոնք կհաղթահարեն 5 տոկոսի արգելագիծը:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՍԱՆԱԿԻՑ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ

Հոկտեմբերի 8-ին անցկացվելիք ընտրություններին մասնակցելու համար, գրանցվել է 19 քաղաքական կու-

սակցություն եւ 6 ընտրադաշինք:

Ընտրություններին որպես ընտրադաշինք, մասնակցում են «Միասնական ազգային շարժումը», «Պատաս Բուրձուլաձե-Պետությունը ժողովրդի համար», «Դավիթ Թարխան-Սուրբավի, Իրմա Ինաշվիլի-Վրաստանի հայրենասերների այլանս, միացյալ ընդդիմություն», «Սինո Բուրջանաձե-ժողովրդավարական շարժում», «Թովաձե-արդյունաբերողներ, մեր հայրենիքը», «Մերոնք-ժողովրդական կուսակցություն»:

Ինչ վերաբերում է ընտրություններին մասնակից քաղաքական կուսակցություններին, ապա առաջնը որել է քաղաքական միավորման, ընտրություններում հանդես են գալիս «Վրացական երազանք-ժողովրդավարական Վրաստան» (Գիորգի Կվիրիկաշվիլի), «Ազատ ժողովրդավարներ» (Իրակլի Ալասանիա), «Լեյբորիստական կուսակցություն» (Շալվա Նաթելաշվիլի), «Հանրապետական կուսակցություն» (Դավիթ Ուսուփաշվիլի), «Ազգային ֆորում», «Միացյալ Վրաստանի համար» (Թամազ Մեծիաուրի), «Ժողովրդական իշխանություն» (Լեւան Մամալաձե), «Վրաստանի խաղաղության համար» (Դավիթ Թեւագաձե), «Զվիադի ուղին-Աստծո անունից» (Միխեիլ-Գելա Սալուաշվիլի), «Վրաստանի կոմունիստական կուսակցություն», «Միասնական կոմունիստական կուսակցություն», «Աշխատավորների սոցիալիստական կուսակցություն», «Մերաբ Կոստավայի ընկերություն», «Վրացական գաղափար», «Զախ այլանս», «Մեր Վրաստանը», «Քարթուլի դասի», «Առաջադիմական ժողովրդավարական շարժում» կուսակցությունները:

ԸՆՏՐԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱԶՄԸ

Վրաստանում գործում է եռաստիճան ընտրական վարչակարգ՝ տեղամասային ընտրական հանձնաժողով, որն իրականացնում է քվեարկության վարչարարությունը, մարզային ընտրական հանձնաժողով եւ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը կանգնած է 13 անդամից, այդ թվում՝ ԿԸՀ-ի նախագահը (այդ պաշտոնը 2013 թվականի սեպտեմբերից հնգամյա ժամկետով զբաղեցնում է Թամար Ժվանիան): ԿԸՀ-ի յոթ անդամներին նշանակում են քաղաքական կուսակցությունները: ԿԸՀ-ում իրենց ներկայացուցիչն ունեն «Վրացական երազանք-ժողովրդավարական Վրաստան», «Միասնական ազգային շարժում», «Ազատ ժողովրդավարներ», «Պախամոդական կուսակցություն», «Հանրապետական կուսակցություն», «Արդյունաբերողներ» եւ Սինո Բուրջանաձեի «ժողովրդավարական շարժում» կուսակցությունները: ԿԸՀ-ի 5 անդամներին նախագահի ներկայացմամբ, նշանակել է խորհրդարանը:

ԿԸՀ-ի օրինակով, մարզային եւ տեղամասային ընտրահանձնաժողովները եւս կազմված են 13 անդամներից, որոնցից 7-ին նշանակում են ԿԸՀ-ում ներկայացված կուսակցությունները: Մարզային ընտրահանձնաժողովների թիվը 73-ն է: Վրաստանում գործում է 3634 տեղամասային ընտրահանձնաժողով: Բացի այդ, աշխարհի 41 երկրների 48 քաղաքներում Վրաստանի դիվանագիտական ներկայացուցչություններում կբացվեն 56 ընտրատեղամասեր: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի տվյալներով, միասնական ընտրացուցակում գրանցված է 3513884 ընտրող: Արտասահմանում գրանցվել է 49719 ընտրող:

ԱՐԵՎԻԿ ԱՆՆՈՒԿՅԱՆ